


# ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ



## ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

*Մարզկենտրոնը՝ ք. Հրազդան*



Տարածքը	2089 քառ.կմ
Գյուղատնտեսական հողատեսքեր	99779 հա
այդ թվում՝ վարելահողեր	39608 հա
Քաղաքային համայնքներ	7
Գյուղական համայնքներ	60
Գյուղական բնակավայրեր	62
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	273.1 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	153.8 հազ. մարդ
գյուղական	119.3 հազ. մարդ

ՀՀ Կոտայքի մարզը զբաղեցնում է ՀՀ տարածքի 7%-ը: 2003թ. դրությամբ մարզի բնակչությունը կազմել է հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 8.5%-ը, ընդ որում մարզի բնակչության 56.3%-ը քաղաքաբնակ է:

ՀՀ Կոտայքի մարզը (կենտրոնը՝ ք. Հրազդան) իր մեջ ընդգրկում է Հրազդանի, Կոտայքի, Նաիրիի տարածաշրջանները: Մարզը ներառում է 7 քաղաքներ՝ Հրազդան, Աբովյան, Չարենցավան, Բյուրեղավան, Ծաղկաձոր, Եղվարդ, Նոր-Հաճն և 62 գյուղական բնակավայրեր:

Մարզի տարածքը հնում մտել է Մեծ Հայքի Այրարատ նահանգի մեջ՝ զբաղեցնելով հիմնականում Կոտայք և Նիգ գավառները: Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում են երկրի համար առանցքային նշանակություն ունեցող Երևան–Հրազդան–Սևան ավտոմայրուղին և Երևան–Հրազդան–Իջևան երկաթգիծը:

Կոտայքի մարզի տարածքով են հոսում Հրազդան և Ազատ գետերը: **Հրազդան գետը** (Չանգու) Արաքս գետի ձախ վտակներից է (երկարությունը՝ 141 կմ): Այն սկիզբ է առնում Սևանա լճից և հոսում հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք: Գետը դուրս է գալիս Արարատյան դաշտավայր և թափվում Արաքս: Գետի համակարգում կան 340 վտակներ, որոնցից 25-ն ունեն 10 կմ-ից ավելի երկարություն: Գետի խոշոր վտակներից են Մարմարիկը, Ծաղկաձորը, Արայի գետը, Գետառը:

**Ազատ գետը** նույնպես Արաքսի ձախ վտակներից է (երկարությունը՝ 55 կմ): Այն սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայից (հիմնականում սնվում է ստորերկրյա ջրերով, հորդացումը՝ ապրիլ-հունիսին): Գետի ջրերն օգտագործվում են հիմնականում ոռոգման

նպատակով: Մարզը հարուստ է նաև հանքային ջրերով, դրա վկայությունն են «Բջնի» և «Արզնի» հանքային ջրերը:

Մարզի տարածքում են գտնվում Գեղամա լեռների փեշերը, Ծաղկունյաց լեռնաշղթան, Հատիս և Արայի լեռները: **Արայի լեռը** հանգած հրաբխային զանգված է, գտնվում է Արագած լեռից արևելք՝ Քասախ և Հրազդան գետերի միջև: Լեռան բարձրությունը 2577մ է: Ըստ ավանդության, լեռը կրում է Արա Գեղեցիկի անունը, որովհետև Շամիրամի դեմ պատերազմելու ժամանակ Արան բանակել է լեռան ստորոտում:

**Հատիս լեռը** (Շամիրամի լեռ) կոնաձև հրաբխային զանգված է (բարձրությունը՝ 2528 մ): Լեռը ծածկված է մարգագետնյա-տափաստանային բուսականությամբ: Հատիս անվանումն առաջացել է հունական Ատտիս աստծո անունից:

Մարզի հարթավայրերն են՝ Եղվարդի հարթավայրը (գտնվում է ծովի մակերևույթից 1200 – 1300 մ բարձրության վրա) և Հրազդանի սարահարթը (գտնվում է ծովի մակերևույթից 1700 – 1800 մ բարձրության վրա):

Մարզի տարածքը հարուստ է տարբեր դարաշրջաններից պատկանող պատմա-մշակութային և հոգևոր կառույցներով:

Մարզում է գտնվում Աբովյանի (Էլար) կիկլոպային ամրոցը, Գառնիի Միհր աստծո ամրոցը և տաճարը (I դ), Գառնիի սբ. Մաշտոցի մատուռը, Ողջաբերդի գմբեթավոր եկեղեցին (V դ), Արզնու եկեղեցին (VI դ), Գեղարդի վանքը (XII-XIIIդդ), Կարենիսի վանքը (VII դ), Բջնիի սբ.Աստվածածնի վանքը (XI դ), Մաքրավանքը (XIII դ), Կեչառիսի վանքային համալիրը (XI-XIII դդ), որտեղ ներկայումս գտնվում է Կոտայքի թեմի առաջնորդարանը, Եղվարդի սբ.Աստվածածին եկեղեցին (Vդ), Արզականի նեղուցի սբ. Աստվածածին եկեղեցին (XIII դ), Բուժականի Թեղենյաց վանքը և այլն:

**ՀՀ Կոտայքի մարզը** համեմատաբար զարգացած ու բազմաճյուղ տնտեսություն ունեցող մարզերից է: Մարզը բացառիկ դեր ունի հատկապես էներգետիկայի բնագավառում: Այստեղ են գտնվում էլեկտրաէներգիայի արտադրության երկու խոշոր կազմակերպություններ:

Մարզի արդյունաբերության մյուս հիմնական ուղղությունը վերամշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ ճյուղերը.

ա) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մսի և մսամթերքի վերամշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, կաթնամթերքի, ալյուրի, ըմպելիքի արտադրություն),

բ) ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն (ապակու և դրանից պատրաստվող իրերի արտադրություն, ցեմենտի արտադրություն),

գ) մետաղագործական արդյունաբերությունը և մետաղե արտադրատեսակների արտադրությունը ( պողպատի և թուջի ձուլում),

դ) կահույքի արտադրություն, այլ կատեգորիաների մեջ չմտցված պատրաստի իրերի արտադրություն (ոսկերչական իրերի և կից ապրանքների (աղամանդի) արտադրություն):

2003թ. հանրապետության արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալում մարզի տեսակարար կշիռը կազմել է 13.5%, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում՝ 9.0%, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 3.9% և բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 3.2%:

2003թ. մարզում գործել են 136 արդյունաբերական, 8 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 14 շինարարական, 19 տրանսպորտային, 3 կապի, 222 ծառայություններ մատուցող և 1286 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 332-ը խանութներ են, 915-ը՝ կրպակներ, 25-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 4-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի և 10-ը՝ սպառողական ապրանքների շուկաներ:

2003թ. մարզում գործել են նաև 111 հանրակրթական (որից՝ 2 ոչ պետական), 18 երաժշտական և արվեստի, 11 մարզական դպրոցներ, 1 վարժարան, 2 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն, 52 նախադպրոցական հիմնարկ, 7 միջին մասնագիտական ուսումնական (որից՝ 1 ոչ պետական) և 1 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ, 5 թանգարան, 80 գրադարան, 2 հյուրանոց, 41 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 7 հիվանդանոց:

**Հրազդանի տարածաշրջան**

Գյուղատնտեսական հողատեսքեր	<b>42323 հա</b>
<i>այդ թվում՝</i> վարելահողեր	<b>12998 հա</b>
Քաղաքային համայնքներ	<b>3</b>
Գյուղական համայնքներ	<b>14</b>
Գյուղական բնակավայրեր	<b>16</b>
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	<b>103.9 հազ. մարդ</b>
<i>այդ թվում՝</i> քաղաքային	<b>79.1 հազ. մարդ</b>
գյուղական	<b>24.8 հազ. մարդ</b>

2003թ. Կոտայքի մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում Հրազդանի տարածաշրջանի տեսակարար կշիռը կազմել է 54.4%, գյուղատնտեսության մեջ՝ 50.7%, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 7.4% և ծառայությունների ծավալում՝ 56.3%:

2003թ. **տարածաշրջանում** գործել են 36 արդյունաբերական, 14 շինարարական, 5 տրանսպորտային, 1 կապի, 88 ծառայություններ մատուցող, 220 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 104-ը խանութներ են, 110-ը՝ կրպակներ, 2-ը՝ հանրային սննդի օբյեկտ, 2-ը՝ սպառողական ապրանքների և 2-ը՝ գյուղարտադրանքի շուկա:

**Տարածաշրջանում** գործել են նաև 35 հանրակրթական, 7 երաժշտական և արվեստի, 6 մարզական դպրոցներ, 1 վարժարան, 2 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն, 28 նախադպրոցական և 3 միջին մասնագիտական և 1 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ, 3 թանգարան, 25 գրադարան, 9 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ, 2 հիվանդանոց և 1 հյուրանոց:

**Հրազդան քաղաքը** (մինչև 1959թ.-ը՝ Ներքին Ախտա) ունի 52.8 հազ. բնակիչ: Քաղաքի հեռավորությունը Երևանից 50 կմ է: Գտնվում է Հրազդան գետի վերին հոսանքի ձախ ափին: Հրազդանի հին բնակիչները գաղթել են Մակուից, Սալմաստից, Սասունից, Կարսից: Հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Այստեղ է գտնվում Հրազդանի ՋԷԿ-ը, որը հզորագույնն է հանրապետությունում: Քաղաքի արդյունաբերության մյուս ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (մասնավորապես՝ ցեմենտի արտադրություն):

2003թ. քաղաքում գործել են 24 արդյունաբերական, 14 շինարարական, 7 տրանսպորտային, 90 ծառայություններ մատուցող և 83 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 80-ը խանութներ են, 1-ը՝ հանրային սննդի օբյեկտ, 1-ը՝ սպառողական ապրանքների և 1-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկա: Քաղաքում 2003թ. գործել են նաև 13 հանրակրթական, 3 մարզական դպրոցներ, 1 վարժարան, 16 նախադպրոցական հիմնարկ, 2 միջին մասնագիտական, 1 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ և 1 թանգարան:

**Չարենցավան** քաղաքը (մինչև 1967թ.-ը՝ Լուսավան) ունի 24.7 հազ. բնակիչ: Գտնվում է Երևանից 38 կմ հեռավորության վրա, Հրազդան գետի ձախ ափին: Քաղաքը հիմնադրվել է 1948թ.-ին, որպես Գյումուշ ՀԷԿ-ի (այժմ՝ Սևան-Հրազդան կասկադ) բանվորական ավան: Չարենցավան է կոչվել ի պատիվ հայ մեծ բանաստեղծ Ե. Չարենցի: 1953թ. ՀԷԿ-ի շինարարության ավարտից հետո քաղաքում կառուցվեցին մի շարք խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ և Չարենցավանը դարձավ հանրապետության կարևորագույն արդյունաբերական կենտրոններից մեկը:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի մետաղագործական արդյունաբերությունը և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը (պողպատի և թուջի ձուլում):

2003թ. քաղաքում գործել են 16 արդյունաբերական, 1 տրանսպորտային, 21 ծառայություններ մատուցող և 20 մանրածախ առևտրի կազմակերպություններ, որոնցից 17-ը խանութներ են: Քաղաքում գործել են նաև 6 հանրակրթական և 1 մարզական, 2 երաժշտական և արվեստի դպրոցներ, 5 նախադպրոցական հիմնարկ, 1 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն և 1 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն, 1 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 1 հիվանդանոց:

**Ծաղկաձոր** քաղաքը (նախկինում՝ Կեչառիս, մինչև 1947թ.-ը՝ Դարաչիչակ) ունի 1.6 հազ. բնակիչ: Կլիման մեղմ է և առողջարար: Ծաղկաձորը հնում կոչվել է Ծաղկոցաձոր (հետագայում՝ Ծաղկունյաց ձոր) և մտել է Մեծ Հայքի Վարաժնունիք գավառի մեջ: Այն պատկանել է Վարաժնունի նախարարությանը: Եղել է Հայոց Արշակունի թագավորների ամառանոցը: IX դարից հետո պատկանել է Պահլավունի տոհմին: Այստեղ է գտնվում Կեչառիսի վանքային համակարգը, որը կառուցվել է Սյունյաց գեղատես օրիորդ Սոֆիի կողմից: Ծաղկաձորում է ծնվել Լևոն Օրբելին, այստեղ է գտնվում Լևոն և Հովսեփ Օրբելի եղբայրների տուն-թանգարանը: 2003թ. քաղաքում գործել է 1 հյուրանոց, 1 հանրակրթական և 1 մարզական դպրոց: Ինչպես հնում, այնպես էլ մինչ օրս, գեղատեսիլ Ծաղկաձորը հանդիսանում է հանրապետության հանգստի կարևորագույն գոտիներից մեկը:

**Կոտայքի տարածաշրջան**

Գյուղատնտեսական հողատեսքեր	47850 հա
այդ թվում՝ վարելահողեր	14608 հա
Քաղաքային համայնքներ	2
Գյուղական համայնքներ	30
Գյուղական բնակավայրեր	30
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	110.4 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	52.8 հազ. մարդ
գյուղական	57.6 հազ. մարդ

2003թ. Կոտայքի մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում Կոտայքի տարածաշրջանի տեսակարար կշիռը կազմել է 18.0%, գյուղատնտեսության մեջ՝ 23.3%, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 74.9% և ծառայությունների ծավալում՝ 15.8%:

2003թ. տարածաշրջանում գործել են 70 արդյունաբերական, 6 շինարարական, 3 գյուղատնտեսական, 12 տրանսպորտային, 1 կապի, 90 ծառայություններ մատուցող, 501 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 76-ը խանութներ են, 400-ը՝ կրպակներ, 17-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 6-ը՝ սպառողական ապրանքների և 2-ը՝ գյուղարտադրանքի շուկաներ: Տարածաշրջանում գործել են նաև 47 հանրակրթական և 2 մարզական դպրոցներ, 8 երաժշտական և արվեստի դպրոց, 18 նախադպրոցական հիմնարկ, 2 միջին մասնագիտական հաստատություններ, 1 թանգարան և 33 գրադարան, 17 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ, 3 հիվանդանոց և 1 հյուրանոց:

**Արովյան** քաղաքը (մինչև 1961թ.-ը՝ գյուղ Էլար, 1961-1963թթ.՝ գյուղ Աբովյան, 1963թ.-ից՝ քաղաք) ունի 44.6 հազ. բնակիչ: Գտնվում է Երևանից 16 կմ հեռավորության վրա: Այն Երևանի հյուսիսային դարպասն է: Հանրապետության ամենաարագ աճող քաղաքներից է, արդյունաբերական խոշոր կենտրոններից մեկը: Քաղաքը ստեղծվել է որպես Երևանի արբանյակ քաղաք: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում գարեջրի արտադրությունը:

2003թ. քաղաքում գործել են 47 արդյունաբերական, 5 շինարարական, 9 տրանսպորտային, 72 ծառայություններ մատուցող և 56 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 49-ը խանութներ են, 7-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 2-ը՝ սպառողական ապրանքների և 2-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ: Քաղաքում գործել են նաև 11 հանրակրթական, 1 մարզական, 9 նախադպրոցական հիմնարկ, 2 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն:

**Բյուրեղավան** քաղաքը, որպես բնակավայր, հիմնադրվել է 1945թ., ունի 8.2 հազ. բնակիչ: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը վերամշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (սպակե տարայի, ճենապակուց և հախճապակուց տնտեսական կենցաղային արտադրատեսակների արտադրություններ):

2003թ. քաղաքում գործել են 3 արդյունաբերական, 3 ծառայություններ մատուցող և 17 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 17-ը՝ խանութ է: Քաղաքում գործել են նաև 3 հանրակրթական, 1 մարզական, 1 երաժշտական և արվեստի դպրոցներ, 1 գրադարան, 1 նախադպրոցական հիմնարկ:

**Նաիրիի տարածաշրջան**

Գյուղատնտեսական հողատեսքեր	16927 հա
այդ թվում՝ վարելահողեր	10564 հա
Քաղաքային համայնքներ	2
Գյուղական համայնքներ	16
Գյուղական բնակավայրեր	16
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ, որից՝	58.8 հազ. մարդ
քաղաքային	21.9 հազ. մարդ

գյուղական	<b>36.9 հազ. մարդ</b>
-----------	-----------------------

2003թ. Կոտայքի մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում **Նաիրիի տարածաշրջանի** տեսակարար կշիռը կազմել է 27.6%, գյուղատնտեսության մեջ՝ 26%, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 17.7% և մատուցված ծառայությունների ծավալում՝ 27.9%:

2003թ. տարածաշրջանում գործել են 30 արդյունաբերական, 4 շինարարական, 5 գյուղատնտեսական, 2 տրանսպորտային, 1 կապի, 44 ծառայություններ մատուցող, 240 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 124 –ը խանութներ են, 108-ը՝ կրպակներ, 5 -ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 1-ը՝ սպառողական ապրանքների և 2 -ը՝ գյուղարտադրանքի շուկաներ:

Տարածաշրջանում գործել են նաև 29 հանրակրթական և 2 մարզական դպրոցներ, 8 երաժշտական և արվեստի դպրոց, 12 նախադպրոցական հիմնարկ, 2 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 1 թանգարան, 19 գրադարան, 15 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 2 հիվանդանոց:

**Եղվարդ** քաղաքը գտնվում է Արայի լեռան հարավային ստորոտում, հեռավորությունը Երևանից 18 կմ է, ունի 11.8 հազ. բնակիչ: Եղվարդը հին բնակավայր է: Առաջին գրավոր տեղեկությունները կապված են 603թ.-ի Հայ-պարսկական պատերազմի հետ: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ հատկապես առանձնանում է սննդամթերքի և ըմպելիքների արտադրությունը (թորած ալկոհոլային խմիչքների (կոնյակի), կաթնամթերքի, ալյուրի արտադրությունը, կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրությունը:

Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի մեջ հիմնական ուղղությունը հացահատիկի մշակությունն է:

2003թ. քաղաքում գործել են 10 արդյունաբերական, 2 շինարարական, 1 տրանսպորտային, 10 ծառայություններ մատուցող և 43 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 39-ը խանութներ են, 3-ը՝ հանրային սննդի օբյեկտներ և 1-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ: Քաղաքում գործել են նաև 3 հանրակրթական, 1 մարզական դպրոցներ, 3 նախադպրոցական հիմնարկ և 1 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն:

**Նոր-Հաճն** քաղաքն ունի 10.1 հազ բնակիչ: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը վերամշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի կահույքի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ արտադրատեսակների արտադրությունը (ոսկերչական արտադրատեսակների (ադամանդի) արտադրությունը):

2003թ. քաղաքում գործել են 10 արդյունաբերական, 17 ծառայություններ մատուցող և 36 մանրածախ առևտրի կազմակերպություններ, որոնցից 33-ը խանութներ են, 1-ը՝ հանրային սննդի օբյեկտ, 1-ը՝ սպառողական ապրանքների և 1-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ: Քաղաքում գործել են նաև 4 հանրակրթական և 1 մարզական դպրոցներ, 2 նախադպրոցական հիմնարկ, 1 թանգարան:

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Հրագրան	ք. Հրագրան
Աբովյան	ք. Աբովյան
Բյուրեղավան	ք. Բյուրեղավան
Եղվարդ	ք. Եղվարդ
Ծաղկաձոր	ք. Ծաղկաձոր
Նոր Հաճն	ք. Նոր Հաճն
Չարենցավան	ք. Չարենցավան

**ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Ալափարս	Ալափարս
Ակունք	Ակունք
Աղավնաձոր	Աղավնաձոր
Առինջ	Առինջ
Արագյուղ	Արագյուղ
Արամուս	Արամուս
Արգել	Արգել
Արզական	Արզական
Արզնի	Արզնի
Արտավազ	Արտավազ
	Փյունիկ
Բալախովիտ	Բալախովիտ
Բջնի	Բջնի
Բուժական	Բուժական
Գառնի	Գառնի
Գեղաղիր	Գեղաղիր
Գեղաշեն	Գեղաշեն
Գեղարդ	Գեղարդ
Գետամեջ	Գետամեջ
Գողթ	Գողթ
Զառ	Զառ
Զովաշեն	Զովաշեն
Զովունի	Զովունի
Զովք	Զովք
Զորավան	Զորավան
Թեղենիք	Թեղենիք
Լեռնանիստ	Լեռնանիստ
Կաթնաղբյուր	Կաթնաղբյուր
Կամարիս	Կամարիս
Կապուտան	Կապուտան
Կարենիս	Կարենիս
Կոտայք	Կոտայք
Հանքավան	Հանքավան
Հատիս	Հատիս
Հացավան	Հացավան
Ձորաղբյուր	Ձորաղբյուր
Մայակովսկի	Մայակովսկի
Մարմարիկ	Մարմարիկ
Մեղրաձոր	Մեղրաձոր



Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
	Կորչյու
Մրգաշեն	Մրգաշեն
Նոր Արտամետ	Նոր Արտամետ
Նոր Գեղի	Նոր Գեղի
Նոր գյուղ	Նոր գյուղ
Նոր Երզնկա	Նոր Երզնկա
Նուռնուս	Նուռնուս
Ողջաբերդ	Ողջաբերդ
Պռոշյան	Պռոշյան
Պտղնի	Պտղնի
Ջրաբեր	Ջրաբեր
Ջրառատ	Ջրառատ
Ջրվեժ	Ջրվեժ
Ռադիոկայանին կից գյուղ	Ռադիոկայանին կից գյուղ
Սարալանջ	Սարալանջ
Սոլակ	Սոլակ
Սևաբերդ	Սևաբերդ
Վերին Պտղնի	Վերին Պտղնի
Բաղսի	Բաղսի
Բանաբեռավան	Բանաբեռավան
Բասախ	Բասախ
Բարաշամբ	Բարաշամբ
Ֆանտան	Ֆանտան



Գառնու տաճարը

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ 10 000 ԲՆԱԿՉԻ ՀԱՇՎՈՎ, 2003Թ.**

	Ընդամենը	նրանցից	
		կանայք	տղամարդիկ
Բնակչությունը, մարդ	10 000	5108	4892
Ծնվածներ	115	59	56
Մահացածներ	72	37	35
Ամուսնություններ	47	X	X
Ամուսնալուծություններ	6	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	22.3	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ`			
նախադպրոցական	108	55	53
հանրակրթական	1550	792	758
երաժշտական, արվեստի, գեղարվեստի կենտրոններ	100	51	49
միջին մասնագիտական	82	42	40
բարձրագույն մասնագիտական	7	4	3
Առողջապահության ոլորտ`			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	17	...	...
Մարզիկներ, մարդ	103	53	50
Զբոսաշրջության ոլորտ, մարդ	3369	...	...
նրանցից` գիտական հիմնարկներում	9	5	4
նրանցից` գիտության դոկտոր	1	1	0
գիտության թեկնածուներ	3	2	1
ուսուցիչներ	146	75	71
բժիշկներ	17	...	...
կրտսեր բուժանձնակազմ	42	...	...
Գործազուրկներ (պաշտոնապես գրանցված), մարդ	238	122	116
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդհանուր կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1481	...	...
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	438	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	20033	...	...
թատրոն	-	-	-
համերգ	-	-	-
թանգարան	436	...	...
Իրավական ոլորտ			
հայտնաբերված վարչական իրավախախտումների քանակը տարվա ընթացքում	276	X	X
անձանց թվաքանակը, որոնց նկատմամբ կայացվել են վարչական իրավախախտումներով պայմանավորված վճիռներ, մարդ	266	...	...
հանցագործության դեպքերի քանակը տարվա ընթացքում	35	X	X



**Կեչառիսի վանքը Ծաղկաձորում**



**Շկեղեցի Գեղարդ գյուղում**